EU4Dialogue Phase II – Grant Scheme

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Դրամաշնորհային առաջարկների ներկայացման հրավեր

ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ) հայտարարում է դրամաշնորհային առաջարկների ընդունում Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն հանուն երկխոսության II» ծրագրի շրջանակում: Դրամաշնորհային մրցույթի նպատակն է աջակցել տեղական նախաձեռնություններին, որոնք բարելավում են հետհակամարտային իրավիճակից տուժած համայնքների կենսապայմանները, ամրապնդում են մարդկային անվտանգությունը, համայնքային դիմակայունությունը, սոցիալական համախմբումը և ստեղծում են երկխոսության ու վստահության կառուցման նախադրյալներ:

Ինչպե՞ս դիմել

1. Հայտադիմումը (Հավելված A), բյուջեի ձևաթուղթը (Հավելված B) և Առաջարկների հրավերը հասանելի են հետևյալ հղումով/QR կոդով՝

   https://procurement-notices.undp.org/view_notice.cfm?notice_id=98846

2. Առցանց տեղեկատվական հանդիպումը կանցկացվի 2026 թվականի մայիսի 26-ին, ժամը 11:00-ին: Հանդիպման հղումն է՝

   https://undp.zoom.us/meeting/register/3R6NEQanS3qWWQuelNJ6-A

3. Պարզաբանումների համար հարցերը կարող են ուղարկվել eu4dialogue.am@undp.org էլեկտրոնային հասցեին՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետից ոչ ուշ, քան 10 օր առաջ:

4. Լրացված հայտադիմումը, բյուջեն և կազմակերպության գրանցման վկայականը պետք է ուղարկել էլեկտրոնային եղանակով՝ PDF (ստորագրված և կնքված) և Word ձևաչափերով, eu4dialogue.am@undp.org հասցեին: Թեմայի տողում նշել՝ “EU4Dialogue Phase II - Grant Scheme”:

5. Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2026 թվականի հուլիսի 03-ը, ժամը 18:00: Յուրաքանչյուր կազմակերպությունից ընդունվում է միայն մեկ հայտ: Թերի կամ ժամկետից ուշ ներկայացված հայտերը չեն դիտարկվի:

Ո՞վ կարող է դիմել

Դրամաշնորհային մրցույթին կարող են դիմել ՀՀ Արարատի (Արարատ խոշորացված համայնք), Գեղարքունիքի, Սյունիքի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերի, ինչպես նաև Շիրակի մարզի Ախուրիկ և Արմավիրի մարզի Մարգարա թիրախային բնակավայրերում գործունեություն իրականացնող կամ դրանց հետ աշխատող տեղական հասարակական կազմակերպությունները, հիմնադրամները և այլ շահույթ չհետապնդող կազմակերպությունները:

Դիմել կարող են Հայաստանում տեղական մակարդակում գործող և գրանցված հասարակական կազմակերպությունները, հիմնադրամները և այլ շահույթ չհետապնդող կազմակերպությունները, որոնք ունեն ֆիզիկական ներկայություն կամ հաստատված հասանելիություն թիրախային համայնքներում, առնվազն մեկ տարվա ծրագրերի իրականացման փորձ և բավարար վարչական, ֆինանսական ու տեխնիկական կարողություններ: Չգրանցված համայնքային նախաձեռնությունները կարող են դիմել փորձառու գրանցված կազմակերպության հետ համագործակցությամբ:

Աջակցության գերակա ուղղությունները

- Շրջակա միջավայր, կլիմա և էներգիա
- Երիտասարդություն, խաղաղություն և անվտանգություն
- Կանանց հզորացում

- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ և ներառական ենթակառուցվածքներ
- Կրթություն, ներառյալ խաղաղության կրթություն
- Տրավմայի հաղթահարում,
- Սոցիալական համերաշխություն
- Ներառական զարգացում
- Թվային ներառում
- Տրանսպորտ և տեղական կապ

Ի՞նչ աջակցություն է տրամադրում ծրագիրը

1. Ծրագրի թիմը դիմորդներին կտրամադրի մեթոդական աջակցություն մասնակցային համայնքային խորհրդակցությունների իրականացման և որակյալ դրամաշնորհային առաջարկների մշակման հարցում: Դրամաշնորհային հայտերի մշակման դասընթացներին մասնակցելու համար գրանցվելու նպատակով խնդրում ենք օգտվել ստորև ներկայացված հղումից կամ QR կոդից՝

https://forms.office.com/e/gyvBa8bHQU

2. Յուրաքանչյուր դրամաշնորհի չափը կկազմի 23,000–90,000 ԱՄՆ դոլար: Վարչական և գործառնական ծախսերը չեն կարող գերազանցել դրամաշնորհի ընդհանուր գումարի 25%-ը:

Տևողությունը

Դրամաշնորհի իրականացման առավելագույն ժամկետը 16 ամիս է: Հայտում ներկայացվող գործողությունների ընդհանուր ժամկետը չպետք է գերազանցի 17 ամիսը՝ ներառյալ ՄԱԶԾ-ին վերջնական հաշվետվության ներկայացման և ընդունման համար նախատեսված 1 ամիսը: